I

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայաստանի հազարամյակների պատմության հոլովույթում XVI–XVIII դդ. եղել են ծանր ու մռայլ մի ժամանակաշրջան: Արևելյան երկու բռնատիրական պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետության տակ հայ ժողովուրդը սոցիալ-անտեսական և ազգային-քաղաքական լուրջ հալածանքների էր ենթարկվում: Հայ առաջադեմ գործիչները ստեղծված իրավիճակից երկիրը դուրս բերելու ելք էին որոնում:

Պատմական հիշողությամբ նրանց հայացքն ուղղվում էր Արևմուտք, դեպի եվրոպական այն պետությունները, որոնք մահմեդական զավթումներից քրիստոնյաներին պաշտպանելու նպատակով միջնադարում խաչակրաց արշավանքներ կազմակերպեցին Արևելք: Հայ եկեղեցու նախաձեռնությամբ մի շարք պատվիրակություններ մեկնեցին Եվրոպայի խոշոր տերություններ, սակայն իրական որևէ արդյունքի չհասան:

Ի վերջո, հայ ազատագրական միտքը դիմաշրջվեց և հանգեց Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու տեսակետին: Պատմականորեն բախտորոշ այդ կողմնորոշումը հենվում էր իրատեսական հիմքի վրա: Հզորացող և դեպի հարավ ծավալվող Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը համընկնում էին Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես վրացիների և հայերի ազատագրական ձգտումներին: Դրանք համահունչ էին: XVIII դ. դարձավ դեպի Հյուսիսային կայսրությունը կողմնորոշվելու և այդ կողմնորոշումն արմատավորելու պատմական փուլ:

Այդ խնդրում էական էր XVII-XVIII դդ. Ռուսաստանում կազմավորված հայկական դպրոցների նշանակությունը: Աստրախանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Հյուսիսային Կովկասի, Նոր Նախիջևանի և մյուս գաղթօջախների հայկական գաղութներն օգտվում էին պետության վերապահած առանձնաշնորհումներից: Նրանց շնորհվել էր ազատ առևտրի ու արդյունաբերության, մայրենի լեզվի, դավանանքի ազատության իրավունք: Ստացած արտոնությունների և առևտրատնտեսական աշխույժ գործունեության շնորհիվ հայերն ապրում էին տնտեսական բարեկեցիկ կյանքով, պահպանում մայրենի լեզուն ու մշակույթը:

Կենդանի կապերի և ի լրո հասնող տեղեկությունների հիման վրա Հայաստանում տեղյակ էին ռուսահայերի բարվոք վիճակին: Այդ հանդամանքը մեծ ազդեցություն էր ունենում, ժողովրդի մեջ ամրապնդում ու խորացնում ռուսական կողմնորոշումը: Նման պայմաններում բնական է, որ ե՛ Վրաստանում, ե՛ Հայաստանում Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու ու նրա հովանու տակ անցնելու ծրագրերը մշակվեցին:

Նոր դարաշրջանը՝ XIX դ., սկսվեց բեկումնային իրադարձությամբ. Հարևան Վրաստանը 1801 թ. միացվեց Ռուսաստանին. Պատմական այդ ակտով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև Հայաստանի համար: Հետագա շրջանը, դարի առաջին երեսնամյակը, դարձավ ամբողջ Անդրկովկասը և, առաջին հերթին, Հայաստանը Ռուսական կայսրությանը միացնելու ռազմաքաղաքական պայքարի բուռն իրադարձություններով հարուստ ժամանակաշրջան: Այդ բախտորոշ ժամանակաշրջանը ծնեց հայ ժողովրդի պատմական ճակատագիրը անօրինելու գաղափարին նվիրված քաղաքական-մշակութային եռանդուն ու աղանդավոր գործչին՝ Ներսես Աշտարակեցուն[1]:

Աշտարակեցին ծնվել է 1770 թ. Արագածոտն գավառի Աշտարակ գյուղում, Հարությունք քահանայի ընտանիքում: Նրա պապը Ներսես Շահազիզյանը, երևելի անձնավորություն էր: Ավանդության համաձայն, նրանց կերդաստանը սերում էր Կամսարական նախարարական տոհմից[2]: Պատանի Թորոս Աշտարակեցին նախնական կրթությունը ստանում է իր կնքահայր Գալուստ արքեպիսկոպոսի մոտ: Ասպա 8 տարեկան հասակում ընդունվում է Մայր Աթոռի Սիմեոն Երևանցու հիմնադրած ժառանգավորաց վարժարանը: Շուրջ 13 տարի սովորում է վարժարանում՝ վայելելով Դանիել եպիսկոպոսի հովանավորությունը: 1791 թ. ձեռնադրվում է սարկավագ և ստանում Ներսես անունը:

Նա, ինչպես նշում է Ալեքսանդր Երիցյանը, պատանեկության տարիներին եղել է «վախտ, նիհար, կարճահասակ, աշխույժ ու կրակոտ ... սրամիտ և հնարագէտ, գարմանալի յիշողութեան տէր, աշխատասէր, ընթերցասէր...»[3]: 1793 թ. Դանիել եպիսկոպոսը նշանակվում է Զմյուռնիայի առաջնորդ: Տեսնելով Ներսեսի աչքաբացությունը, նրան վերցնում է իր հետ՝ թեմում գրագրությունը կատարելու համար: Հաջորդ տարում աբեղա Ներսեսը որպես նվիրակ մեկնում է Մոլդովա, Վալաքիա: Լուր ստանալով Դանիելի պատրիարք ընտրվելու մասին, 1799-ին վերադառնում է Կ. Պոլիս և նշանակվում պատրիարքական փոխանորդ: Կարճ ժամանակ անց վերադառնում է Էջմիածին և ձգտում վախճանված Ղուկաս կաթողիկոսից հետո Մայր Աթոռի գահին նստեցնել իր ուսուցիչ Դանիել արքեպիսկոպոսին[4]:

Եվ, այսպես, XIX դ. արշալույսին սկսվում է Աշտարակեցու բուռն ու յայնածավալ գործունեությունը: Նա Էջմիածնում ծավալված Դավիթ-Դանիելյան հակամարտության կենտրոնում էր: Այդ առիթով ակտիվ հարաբերվում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքության, ռուսահայոց թեմի և պարսկական իշխանությունների հետ: Գերազանցապես նաև նրա գործուն մասնակցությամբ էր, որ Դավիթ եպիսկոպոսը մեկուսացվեց և կաթողիկոս

---

[1] Ն. Աշտարակեցու գործունեությանն անդրադարձել են շատ հեղինակներ, մասնավորապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու թեման շոշափած մասնագետները: Սույն հոդվածի առանցքն է կազմել ամբողջական լուսաբանում չստացած նրա վաստակի վերահանումը՝ հատկապես լուսավորության ասպարեզում:

[2] Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար (այսուհետև՝ Նյութեր). Թիֆլիս, 1898, էջ 5-16:

[3] Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ (այսուհետև՝ Պատմություն). Հ. Ա. Թիֆլիս, 1898, էջ 3:

[4] Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Նյութեր, էջ 26-28:

դարձավ Դանիելը, իսկ հետագայում վերջինիս փոխարինեց Եփրեմ արքեպիսկոպոսը:

1804 թ. Երևանի առաջին պաշարման ժամանակ Աշտարակեցին ռուսական առաջապահ գնդի մեջ էր: Տարեց և հիվանդոտ Հայրապետը գործունեության ասպարեզը թողել էր իր հոգևոր զավակին: Այդ դժվարին ժամանակաշրջանում Մայր Աթոռի առանցքային հարցերը միասնաբար տնօրինելու և նրա աշխատանքներին նշանավոր միաբանների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար նա առաջարկեց ստեղծել բարձրագույն հոգևոր խորհուրդ կամ Սինոդ: 1808 թ. հունիսին կազմվեց Սինոդը, որի 7 անդամներից մեկը և փաստացի ղեկավարը Ներսես արքեպիսկոպոսն էր: Վերջինս Վեհափառի և Սինոդի անունից պաշտոնական գրագրությունների մեջ էր Ռուսաց, Պարսից, Գերմանիայի և Ֆրանսիայի արքունիքների հետ, որոնց ներկայացուցիչներն այցելում էին Էջմիածին և լավ ընդունելության արժանանում: 1812 թ. Մայր Աթոռ այցելած անգլիացի հոգևորական Հենրի Մարտինը վկայում է. «Մենաստանս այս կամ ավելի լավ է ասել ընդհանուր ազգը հայոց են ընդ իշխանութեամբ Ներսեսի ... քանզի պատրիարքն (կաթողիկոսը - Վ. Բ.) տարվա բազում ամիսներին հիվանդության անկողնում է գտնվում»[5]:

1814 թ. ուժերի ծաղկման շրջանում Ներսես Աշտարակեցին նշանակվում է վիրահայոց թեմի առաջնորդ: Ճանաչված գործչի այդ նշանակումը Թիֆլիսում թե՛ ժողովրդական և թե՛ պետական-պաշտոնական շրջանակներում ընդունվում է խանդավառությամբ: Ռուսաց կայսրը հաստատում է Աշտարակեցու ընտրությունը, հանգամանք, որը բարձրացնում և հաստատուն էր դարձնում թեմական առաջնորդի հեղինակությունը:

Աշտարակեցին վիրահայոց վիթխարի թեմը, որը տարածվում էր Սև ծովից մինչև Գանձակ, գտավ անմխիթար վիճակում: Ռուսական տիրապետության հաստատումից անցել էր 13 տարի, բայց անընդհատ պատերազմների, համատարած հիվանդությունների և այլ պատճառներով բարեկարգություն չէր կատարվել: Ձկային դպրոցներ, ընակչությունը գտնվում էր խավարի մեջ, անգամ հոգևորականների մի մասը գրել-կարդալ չգիտեր: «Իրաց այս դրութեան մեջ,– գրում է Ալ. Երիցյանը,– հայ հոգևորականութիւնը տգէտ էր, ըմբոստ, անպատկառ, ոչ իւր կարգը և ոչ պատիւր ճանաչող: Եկեղեցիքը թալանուած, ազգային եկամուտները հափշտակուած: Ազնուականք և իշխանականք անուսք, գոռողք իւրանց ցեղական ծագմամբ, բայց զազրելի վարք ու բարքի տէր, կեղեքիչք և հարստահարիչք ռամիկների ու տկարների: Ժողովուրդն ընկղմված խավարի մեջ, բարոյապէս ընկած, օտարամոլութեան հակուած, խղճալի ու ցաւալի դրության մեջ»[6]: Աշտարակեցին իրեն հատուկ վճռականությամբ ու ձեռներեցությամբ ձեռնամուխ է լինում թեմի բարեկարգմանը: Սակայն նա հանդիպում է մեծահարուստ իշխանների, քահանաների համառ դիմադրությանը: Այդ անզիջում պայքարը տևում է 3-4 տարի, որին միջամտում են Եփրեմ կաթողիկոսը և ռուսական պետության բարձրագիր ատյանների ներկայացուցիչները: Ի վերջո, թեմի առաջնորդին հաջողվում է արմատախիլ անել ապ-

[5] «Էջմիածին», 1970, թ. էջ 24:

[6] Ալ. Երիցյան. Պատմություն, էջ 31:

գային-եկեղեցական կյանքում աղայական և քահանայական կամայականությունները: Ապա նա ծավալում է եկեղեցաշեն, կրթական-լուսավորական բուռն ու արդասավոր գործունեություն:

Աշտարակեցին այն դեմքերից չէր, որ սահմանափակվեր սոսկ հոգեոր թեմի գործերով, որքանով էլ դրանք մեծ և ընդգրկուն լինեին: 1826 թ. ամռանը, երբ պարսկական բանակը հանկարծակի անցյալ ռուսական սահմանը և սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, թեմական առաջնորդն անվարան իրեն նետեց այդ իրադարձությունների ոլորտը: Նա հեռատեսորեն Հայաստանի ազատագրումն ու երկրի առաջընթացը միանշանակ տեսնում էր Ռուսաստանի հովանու տակ անցնելու մեջ: Պատմական այդ ակտը ռուսական զենքի միջոցով իրականացնելու համար ջանք չէր խնայում, անում էր հնարավորինը՝ հայ ժողովրդին ոտքի հանելու համար: Պարսիկների անսպասելի հարձակման հետեանքով ստեղծված դժվարին օրերին նրանց դիմադրելու վստահություն ներշնչող կոչով դիմեց ժողովրդին: «Դիմադրեցեք թշնամուն և սորա արբանյակներին,– գրում էր նա,– կամ ռուսաց զորքերի հետ միասին և կամ թվ ուրիշ կերպ, որ աւելի հարմար կլինի ներկայ աւազակային յարձակմանց միջոցին, իսկ թվ հարկ լինի՝ մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»[7]: Նրա շրջաբերականները տարածվում էին Անդրկովկասի հայության շրջանում՝ կողմնորոշող ու ոգեշնչող նշանակություն ունենում:

Կովկասի ռուսական զորքերի հրամանատարության գիտությամբ ու հավանությամբ Ներսես Աշտարակեցին ձեռնամուխ է լինում կամավորական գումարտակներ կազմակերպելուն: Թիֆլիսում ձևավորվող այդ գումարտակները ռուսական զորամասերի հետ մասնակցելու էին ռազմական գործողություններին, առաջին հերթին երևանյան արշավանքներին: Այդ ջոկատների կազմավորման համար ստեղծվել էր 34 կետից բաղկացած հատուկ կանոնադրություն: Դրա համաձայն կամավորական ջոկատներում ընդգրկվում էին 18-30 տարեկան ոչ միայն Անդրկովկասի, այլև Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր՝ վայրերի հայ երիտասարդները: Կամավորական ջոկատները զենք, զինամթերք, հագուստ ու պարեն ստանում էին պետությունից: Նրանք ունեին իրենց ազգային դրոշը՝ Հրամանատարները սպայական աստիճաններ ունեցող հայ զինվորականներ էին, իսկ հրամաններն էլ տրվելու էին հայերեն լեզվով: Նրանք հավատարիմ ծառայության երդում էին ընդունում: Կամավորական այդ գումարտակները, փաստորեն, կազմակերպված հայկական զորական միավորներ էին:

1827 թ. մարտին Թիֆլիսում Աշտարակեցին, ձի հեծած, կամավորական գնդի գորահանդես կազմակերպեց: Նա սրտաշարժ խոսքերով օրհնեց ու ողջունեց նրանց և ապա հրամայեց անցնել տաղտկական շարքով: «Տեսարանը,– գրում է Ալ. Երիցյանը,– սքանչելի էր: Ալեզարդ եպիսկոպոսիս «ապրեք քաջեր, շնորհակալ եմ» ձայն տալուն երաժշտությամբ անցնող գունդը պատասխանում էր «Կեցցէ» -ով և «Ուրա» -ով և հայ զինուորաց աղաղակին խառնվում էր բազմաթիւ հանդիսատես ժողովրդի հրճուանաց ձայ-

[7] Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք. մասն Ա, Թիֆլիս, 1881, էջ 243:

նը»[8]: Մայիս ամսին հայկական եկեղեցում կատարվում է երդման արարողությունը և դրոշի օրհնությունը. Ներսիսյան դպրոցի տեսուչ, դրող-լուսավորիչ Հարություն Ալամդարյանը հայրենասիրական ոգեշունչ ճառով գիմում է մարտի դաշտ մեկնող զինվորներին[9]:

Հայկական կամավորական գումարտակների կազմավորումը, որպես ռուսական բանակի դինակից ու դաշնակից, ուներ քաղաքական ե ռազմական նշանակություն:

Աշտարակեցին շրջաբերականներով արդեն ամբողջ հայությանն ավետում էր Հայաստանի շուտափույթ ազատագրումը: «Հասաւ ժամը,– կրում էր նա,– երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատութիւնը: Հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնէ իւր վաղեմի անկախութիւնը: Ոտքի կանգնէք, հայոց քաջեր, թօթափեցէք պարսից լուծը, ուրախացրէք ալեգարդ Մասիսին, մի անդամ արիւնով ներկեցէք հայրենի հողերը ու ապա ապրեցէք ազատ ... Ժամ է արդեն, օն անդր, հիմա կամ երբեք»[10]: Ռուսական զորքերի և նրանց միացած հայ կամավորների ուժերով շուտով դրավվում են Էջմիածինը, Սարդարապատը, իսկ հոկտեմբերի 1-ին՝ Երևանը: Իր ծառայությունների համար Ներսես Աշտարակեցուն Նիկոլայ I-ը պարգևատրում է Ալեքսանդր Նևսկու առաջին կարգի շքանշանով:

Ռուսական բանակը, ինչպես հայտնի է, վճռական հաղթանակ տարավ ե 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանի Երևանի, Նախիջևանի խանությունները և Օրդուբադի օկրուգը միացվեցին Ռուսաստանին:

Դարեր շարունակ Հայաստանում թուրքական և պարսկական իշխանությունների կողմից կազմակերպած գաղթեցումների, տեղահանումների և մահմեդական ցեղերի բնակեցնելու հետևանքով հայ ազգաբնակչությունը նվազել էր: Անդամ Հայաստանի կենտրոնական մասում, Արարատյան դաշտում մահմեդական տարրն իր քանակով գերազանցում էր հայ ազգաբնակչությանը: Ստեղծված այդ ծանր իրավիճակը մեծապես մտահոգում էր ժամանակի նշանավոր հայ դարձիչներին և առաջին հերթին Աշտարակեցուն: Նրա խորախորհուրդ միտքը կարողացավ կռահել, որ կարելի է պատերազմական իրավիճակն օգտագործել բախտորոշ այդ խնդիրը լուծելու համար: Տակավին պատերազմը չավարտված մեծ հայրենասերը վճռական քայլերի է դիմում այդ ուղղությամբ: 1827 թ. նոյեմբերին Դեհկարխանում Պարսկաստանի հետ հաշտություն կնքելու բանակցություններ են սկսվում: Աշտարակեցին իր պատվիրակներ Բարսեղ արքեպիսկոպոսին և Մարգար Եղիազարյանին ուղարկում է այնտեղ: Նրանք հանդիպում են Պասկևիչին և Գրիբոյեդովին ու հանձնում Աշտարակեցու նամակը, որով նա խնդրում էր հաշտության պայմանագրում նախատեսել նաև պարսկահայերի գաղթը դեպի Հայաստան: Նամակում միաժամանակ նշվում էին գաղթը կազմակերպելու պայմանները, շեշտվում է գաղթողների ունեցվածքի և նրանց իրավունքների հարցերը: Աշտարակեցու հետևո-

[8] Նույն տեղում, էջ 271-272.
[9] Նույն տեղում, էջ 272-276.
[10] Նույն տեղում, էջ 268-269:

զական միջամտության շնորհիվ Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ կետով հատուկ ձևակերպում ստացավ պարսկահայերի ներգաղթի խնդիրը:

Ռազմական գործողություններն ավարտվելուց հետո Երևանի մարզային ժամանակավոր վարչությանն առընթեր կազմակերպվեց գաղթի հատուկ կոմիտե: Այդ գործի կազմակերպումը հանձնարարվեց Պետերբուրգից հրավիրված Լազարյան համբավավոր տոհմի ներկայացուցիչ գնդապետ Եղիազար Լազարյանին: 1828–1830 թթ. Պարսկաստանից 40 ու Արևմտյան Հայաստանից շուրջ 80 հազար հայերի գաղթը և նրանց Արևելյան Հայաստանում հաստատվելը մեծապես փոխեց երկրի ժողովրդագրությունը, նրա էթնիկական կազմը: Դա համազգային նշանակության առանցքային խնդիր էր, որի նախաձեռնման և իրականացման գործում վճռորոշ էր Աշտարակեցու դերը: Արևելյան Հայաստանը դարձավ հայության համախմբման, ազգահավաքման, նրա տնտեսական, մշակութային կյանքի զարգացման կենտրոն:

Այդ ամենով հանդերձ, Ներսես Աշտարակեցին և ժամանակի հայրենասեր մյուս գործիչները հետամուտ չէին հայրենի երկիրը սոսկ քրիստոնյա մեծ պետության կազմի մեջ մտցնելու գաղափարին: Հենվելով Հայաստանի ազատագրման նախորդ դարաշրջանի հասարակական մտքի նվաճումների վրա նրանք ձգտում էին իրական դարձնել Ռուսական կայսրության կազմում հայկական պետականության վերականգնումը: Նրանց հիշողության մեջ թարմ էին Ռուսաստանի օգնությամբ և նրա հովանու ներքո հայկական պետականությունը վերականգնելու Մովսես Սարաֆյանի, հատկապես Հովհաննես Լազարյանի ու Հովսեփ Արղությանի և Շահամիրյանների շուրջ կես դար առաջ մշակած ծրագրերը: Այդ ծրագրերի ոգով հայ հայրենասերների մի խումբ (Ս. Լազարյան, Ա. Խուդաբաշյան, Կ. Աղուլիսյան-Երկայնաբազուկ և ուրիշներ) կազմում է մի նախագիծ և ներկայացնում կառավարությանը: Սակայն այն ընդունելության չարժանանալով, մերժվում է:

Ազգային խնդիրների արծարծման կենտրոնական դեմքը Աշտարակեցին էր: Այդ ասպարեզում նա հակասությունների և անզիջում պայքարի մեջ էր ցարական պաշտոնյաների հետ: Ազգային-հայրենասիրական տրամադրությունները մարելու և հարցի հանգուցալուծման ելքը ցարական իշխանավորները տեսնում էին ճանաչված ու մեծ հեղինակություն ունեցող գործչին Հայաստանից հեռացնելու մեջ: Այդ նպատակով Նիկոլայ I-ի հրամանով ստեղծվեց, մինչ այդ բազմիցս մերժման արժանացած, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը, որի հոգևոր առաջնորդ նշանակվեց Աշտարակեցին: Այդուհանդերձ, փաստորեն, Ն. Աշտարակեցու գլխավորած հայրենասերների գործունեությունն անհետևանք չանցավ: Ցարական իշխանությունը Ռուսաստանին միացրած Արևելյան Հայաստանը միավորեց վարչական ինքնավար մի տարածքի մեջ դրան տալով «Հայկական մարզ» անվանումը: Որքան էլ սահմանափակ լինեին մարզի իրավասությունները, այդուհանդերձ, «Հայկական» անունով մարզի ստեղծումն ազգային որոշ ինքնավարության առկայության վկայությունն էր: Դրա նշանակությունն առավել հստակ կուրվագծվի, եթե դուգահեռներ անցկացնենք հարևան Վրաստանի հետ:

Վրաստանն ուներ ազգային պետություն, սակայն ստեղծված իրավիճակի թելադրանքով 1783 թ. Գեորգիևսկում հատուկ դաշնություն կնքեց իր պետականությունը պահպանելու պայմանով անցնելով Ռուսաստանի հովանու տակ: 1801 թ. Վրաստանն ուղղակի միացվեց Կայսրությանը առանց որևէ պայման կատարելու: Հայաստանը դարեր շարունակ զրկված էր պետականությունից. «Հայաստան» անվանումը մուսացության էր մատնված Թուրքիայում և Պարսկաստանում: Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետ Հայաստանին ինքնավարություն տալու ընդունված որևէ դաշնություն չկար: Նման պայմաններում հատուկ «հայկական» անունով մարզի ստեղծումն ինքնին դրական, առաջադիմական երևույթ էր: «Հայկական մարզի» ստեղծման հարցում մեծ էր Ն. Աշտարակեցու, ինչպես նաև հայրենասեր մյուս գործիչների ծառայությունը:

* * *

Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում վճռորոշ դերակատարություն ունենալը Ն. Աշտարակեցու գործունեության սոսկ մի կողմն էր: Նրան հոգեհարազատ են եղել և մշտապես զբաղեցրել են ժողովրդի կրթության, լուսավորության հիմնախնդիրները:

Թուրք-պարսկական դարավոր սիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովուրդը զրկված էր մշակույթը զարգացնելու հնարավորությունից: Տիրապետող էին համատարած խավարն ու հետամնացությունը: Նոր դարաշրջանի գարթոնքը, լուսավորության տարածումը, ժողովրդին գիր ու գրականության հաղորդակից դարձնելը հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկն էր: Այն իրավամբ դիտվում էր որպես ժողովրդի ինքնությունը հավաստող, նրան ազգային ինքնագիտակցության բերող հիմնական միջոց: Ներսես Աշտարակեցու ներդրումը ծանրակշիռ ու վիթխարի է նաև այս ասպարեզում:

Հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը չէր սահմանափակվում միայն Արարատյան երկրով, այն ընդգրկում էր ողջ հայ իրականությունը: Ռուսաստանի ամենից ավելի ստվար բնակչություն ունեցող Նոր Նախիջևանի հայկական գաղութում տեղյակ էին հայ պատանիների համար Մոսկվայում ուսումնարան հիմնելու Հովհաննես Լազարյանի կտակի մասին: Քաղաքի հասարակության երևելի ներկայացուցիչները Նոր Նախիջևանի առավելությունները կռվան դարձնելով կրթօջախը Մոսկվայի փոխարեն Նոր Նախիջևանում բացելու խնդրանքով քանիցս դիմում են կտակակատար Հովակիմ Լազարյանին: 1807 թ. Նոր Նախիջևանում առաջնորդական հաջորդի պաշտոն էր վարում Ն. Աշտարակեցին և, ամենայն հավանականությամբ, մասնակցում էր ուսումնարանի շուրջ սկսված բանակցություններին: Նա կազմում է ապագա կրթական հաստատության կանոնակարգը:

«Դաղափար կանոնագրին ուսումնարանի, շարադրելոյ ի Ներսես վարդապետէ» խորագիրը կրող այդ ծրագրային փաստաթղթում հեղինակը մշակել է կրթօջախի բոլոր հիմնահարցերն ընդգրկող ընդարձակ ու համա-

կայմանի կանոններ[11]: Կանոնների 12 կետից բաղկացած առաջին բաժնում սահմանվում են սովորողների տարիքի, ուսման տևողության, ծնողների և ուսումնարանի հարաբերության հարցերը: Երկրորդ և երրորդ բաժինները վերաբերում են ուսուցիչների պարտականություններին և իրավունքներին, ուսման ծրագրերին, վարժարանի միջոցներին, ուսման վարձին: Կանոնների մյուս հատվածներում նույնպես մանրակրկիտ մշակված են ուսումնարանի ներքին կարգ ու կանոնը, աշակերտների եկեղեցի հաճախելու, վարքի, տնային աշխատանքների համակարգը և այլ հարցեր: Ուշադրավ է, որ հեղինակը լիովին հավասար պայմաններ է ստեղծում հարուստ և աղքատ ընտանիքի զավակների համար: Ավելին, գտնում է, որ հարուստները, «հանուն Աստծոյ» մի չունեոր երեխայի ծախսերը պետք է վերցնեն իրենց վրա: Նոր Նախիջևանի դաղութի պատմության առիթով անդրադառնալով Աշտարակեցու մշակած այս կանոններին, ժամանակին (1967 թ.) գրել ենք. «Ներսես Աշտարակեցու կազմած կանոնները, կարծում ենք, հետաքրքրություն է ներկայացնում հայ մանկավարժության պատմության համար և արժանի է մասնագետ մանկավարժների ուշադրությանը»[12]: Ներկայումս մնում ենք նույն կարծիքին:

Հաջորդ տարում վերադառնալով Էջմիածին՝ Աշտարակեցին անմխիթար դրության մեջ գտավ Մայր Աթոռը: Այդպիսի վիճակ էր ստեղծվել Դավիթ-Դանիելյան պայքարի, պարսկական ասպատակությունների, ռուսական զորքերի կողմից Երևանի պաշարումների հետևանքով: Սինոդական կառավարությունն իր ձեռքը վերցնելու օրից Աշտարակեցին ձգտում էր վերականգնել Սիմեոն կաթողիկոսի հիմնած ժառանգավորաց դպրոցը: Ստանալով Թագաժառանգ Աբբաս-Միրզայի համաձայնությունը՝ սկսեց շրջակա գյուղերից երեխաներ հավաքագրել դպրոցի համար: Սակայն ռուս-պարսկական պատերազմն արգելքներ էր հարուցում: Միայն 1813-ին ավարտվեց շինարարությունը՝ 50 աշակերտների համար: Այնուհանդերձ Աշտարակեցին շուտով համոզվեց, որ Էջմիածնի դպրոցն իր մակարդակով ու ծավալով չի կարող բավարարել ուսուցման անհրաժեշտ պահանջները. նրան մշտապես մտահոգել է ժամանակի պահանջները բավարարող ուսումնարան հիմնելու գաղափարը: Ռուսաց նախարար Ալեքսանդրին մեկ առիթով նա գրել է, որ տակավին 20 տարեկան հասակից երազել է Մխիթար Սեբաստացու օրինակով ուսումնարան հիմնելու մասին: «Ես ի ժամանակաց 20 ամեայ հասակի իմոյ,— գրում է Աշտարակեցին,— տեսնելով և լսելով ի մերազնեայս սակաւ յոյժ գիտնական անձինս, և զգալու զայնպիսի համալսական ապաբախտութիւն իմում հայրենի ազգի առ չգոլոյ ուսումնարանաց, միշտ միտք իմ և խորհուրդք տառապացուցանէին զիս խոկալ վասն կարևոր հնարից ազգական ուսումնարանաց՝ ունենալով ի նպատակի մատաց զՄխիթար վարդապետ Սեբաստացի, որ նովին ցանկութեամբ յամի 1717 սատարացեալ ի հայրենեաց Հայաստանի և ի համազգեաց, կարաց հա-

---

[11] Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), կաթողիկոսական դիվան թ. 18, վ. 167: Տե՛ս նաև Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Պատմություն, էջ 11-24:

[12] Վ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Նոր Նախիջևանի հայկական դաղութի պատմություն. Երևան, 1967, էջ 410:

սանել այնմ իւրոց բաղձանաց, յեւ բաղում աղղի անձնատանջ աշխատութեանց ... կառուցանալով դուսումնարան Հայոց ի Վենետիկ ...»[13]:

Նշանակվելով վիրահայոց թեմի առաջնորդ՝ Աշտարակեցին անմիջապես զբաղվում է բարձրորակ ուսումնարան հիմնելու խնդրով: Թիֆլիս ժամանելու հենց առաջին տարում ուսումնարան կառուցելու համար միջոցներ հայթայթելու նպատակով քաղաքի երևելի անձանց խորհրդակցություն է հրավիրում: Ապագա ուսումնարանի համար որոշ հիմքեր ստեղծելու նպատակով քաղաքի վանքերից մեկի խուցերում ժամանակավոր դպրոց է բացում, ուր գրել, կարդալ պետք է սովորեին:

Դպրոցի համար դրամական միջոցներ գտնելու հետ մեկտեղ նա միաժամանակ մտահոգվում էր համապատասխան ուսուցիչներ հավաքագրելու և սպարան ձեռք բերելու հարցով: Պետերբուրգից ժամանած աղնվական Սարգիս Լորիս-Մելիքյանցը դպրոցի կառուցման համար 1817 թ. նվիրում է 500 ռուբլի: Պարզվում է, որ ժամանակին Հովհաննես Լազարյանը կտակ է թողել, որ եթե Թիֆլիսում հայոց ուսումնարան հիմնվի՝ իր ժառանգներից կարող են ստանալ 3000 ռուբլի[14]: Ներշնչված անսպասելի հովանավորությունից՝ Աշտարակեցին հաջորդ տարվանից սկսում է ծրագրված ուսումնարանի շինարարությունը: Դպրոցի շենքի կառուցմանն անհրաժեշտ 30 հազար գումարը լրացնելու համար հոգևոր առաջնորդը հանգանակություններ է կազմակերպում, դիմում տյալ միջոցների: Ի վերջո, շինարարությունն ավարտվում է 1824 թ., և նույն տարում կատարվում է դպրոցի հանդիսավոր բացումը:

Աշտարակեցու մերձավորներից Գևորգ աղա Արծրունին, առևտրական գործերով լինելով Եվրոպայում, տեղեկանում է, որ Ամստերդամում հայոց եկեղեցուն առընթեր շինությունների մեջ պահվում է Ոսկան Երևանցու և Վանանդեցիների XVIII դ. տպարանը: Նա գնում է այդ տպարանը և նվիրում նորաբաց ուսումնարանին. 1826 թ. դպրոցն արդեն ուներ գործող տպարան[15]:

Ուսումնարան հիմնելու հոգսերի մեջ ամենից ավելի դժվարը, թերևս, այն պատշաճ մակարդակի մանկավարժներով ապահովելու հարցն էր: Տակավին 1814 թ. հոգևոր առաջնորդը գրագրությունների մեջ էր Փարիզում աշխատող գիտնական-մանկավարժ Շահան Ջրպետյանի հետ: Վերջինս որոշ այլ անձանց հետ կազմում է ապագա ուսումնարանի կանոնակարգը, որը, սակայն, հավանություն չի ստանում Աշտարակեցու կողմից: Ջրպետյանը ցանկություն էր հայտնում հայրենիք վերադառնալ, բայց խուսափում էր այդ ուղղությամբ գործնական քայլեր կատարելուց: Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում չկային հարմար թեկնածուներ: Մնում էր Մոսկվան, որի Լազարյան ճեմարանում կային անվանի մանկավարժներ: Աշտարակեցու ընտրությունը կանգ է առնում Հարություն Ալամդարյանի վրա: Լուսավորական շարժման նշանավոր գործիչը ստանձնեց դպրոցի տեսչությունը և այն վարեց մինչև 1830 թ.: Նա այնպիսի արդյունավետ գործունեություն ծավալեց, որ այդ 5 տարիներն անվանվեցին «դար Ա-

[13] Ա ր ի ց յ ա ն. Պատմություն, էջ 24-25.
[14] Նույն տեղում, էջ 40:
[15] Նույն տեղում, էջ 118:

յամղարյանի»: Դպրոցը հիմնում է նաև իր գիտական եռամյա պարբերականը՝ «Տարեգրություն Հայոց դրադիտական» խորագրով:

1826 թ. տարվա վերջի և տեղի հասարակության ներկայացուցիչների առաջ հրապարակային քննություն էին հանձնում ուսումնարանի սաները: Վրաց իշխան գեներալ Օթար Ամիլախվարը հիացած աշակերտների առաջադիմությունից, մոտենում է հոգևոր առաջնորդին և ասում. «Դու իմ հայրենիքում լույսի վառեցիր, լամբս ու տեսածս պարտավորություն են դնում վրաս խնդրել ընդունել ինձանից Սողանլուղ գյուղում գտնվող բարեկից այգին ի մշտական վայելումն քո ուսումնարանի»[16]:

1828 թ. Ներսիսյան դպրոցը տալիս է առաջին շրջանավարտները, որոնց թվում էին Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանցը, Հովհաննես Շիրմազանյանը և շատ ուրիշներ: Ներսիսյան դպրոցը և Լազարյան ճեմարանը նոր զարաշրջանում, երկար ու ձիգ հարյուր տարիների ընթացքում, եղան հայ իրականության կրթական-դաստիարակչական, գիտական-լուսավորական գլխավոր կենտրոնները:

Ներսես Աշտարակեցին լինելով գործունյա և մեծ եռանդի տեր, ամեն տեսակ զեղծումների, ապօրինությունների կատաղի թշնամի՝ ողջ կյանքում պայքարեց նման երևույթների դեմ՝ մշտապես պահպանելով բարձր արժանապատվությունը: «Բեսարաբիոյ անկիւնը նետուած,— գրում է Օրմանյանը,— երբեք ինքզինքը չստորացուց... այլ զինքն ամէն հակառակութիւններէ բարձր պահեց, իր արժանապատվութիւնը պաշտպանեց, իր գործունէութիւնն ընդարձակեց, եւ Բեսարաբիոյ անշուք եւ լքեալ վիճակը նախանձելի դրության վերածեց, իր անձն ալ միանգամայն պատկառելի ընծայելով»[17]:

Աշտարակեցին այնպիսի մեծ հեղինակություն էր վայելում, որ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի մահից հետո (1843) ամենուր այդ բարձր պաշտոնում հենց նրան տեսնելու տրամադրությունն էր իշխում: Եվ այդպես էլ եղավ:

Կաթողիկոսության տարիներին նա գերազանցապես զբաղվում էր Մայր Աթոռում կարգ ու կանոնի վերահաստատման, բարեկարգման և տնտեսական ապահովության հարցերով: Միաբանությունը, իրավամբ, գտնվում էր սպասիվության մեջ: «Չէ կարելի, որ յոյներս միշտ դնենք ժողովրդի նվերքի վրա,— ասում է նա,— սովորեցէք տնտեսութիւն, վանքի կալուածքներն լաւ դրութեան հասցրէք, անկորուստ ստացէք արդիւնքն, ոչ թէ անգործ նստելով աչք տնկեցէք ժողովրդի ձեռքին»[18]:

Ազգին վիթխարի ծառայություններ մատուցելուց հետո էլ երբեք չէր բավարարվում կատարածով, այլ նույնիսկ կյանքի մայրամուտին մտորում էր նորանոր ծառայություններ կատարելու մասին: Անձնական կյանքի իմաստը դրա մեջ էր տեսնում: Մտերիմ բարեկամին՝ Մ. Լորիս-Մելիքյանին հաղորդել է իր հետևյալ ապրումները. 85 տարեկան է, մեռնելուց չի վախենում, չի ուզում մեռնել, ոչ թե նրա համար, որ կյանքից էլի ինչ-որ բան վերցնի, այլ, որ անելիք շատ է մնացել, ժողովրդին շատ է պարտական:

---

[16] *«Էջմիածին», 1970, Թ, էջ 16:*

[17] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում. Գ, Էջմիածին, 2001, էջ 4343-4344:*

[18] *Նույն տեղում, էջ 4437-4438:*

Ներսես Աշտարակեցին երկար կյանք ունեցավ, մահկանացուն կնքեց 87 տարեկան հասակում, որից 6 առնամյակներն եղան հասարակական ակտիվ գործունեության տարիներ: «Գրեթէ չմնաց միջավայր մը,– ըրում է Մ. Օրմանյանը նրա մասին,– որուն մէջ գործած չըլլա... բայց ոչ մէկին մէջ յետնյալ երեցաւ, եւ ամէն տեղ դիրքին պահանջած գործիչը եղաւ, եւ միշտ հնարաւոր յաջողութեամբ ե պատուաւոր յաջողականութեամբ ձեռնարկներուն մեջէն ելավ»[19]: Ներսես Աշտարակեցին մշտապես հայտնվում էր հասարակական, համազգային խնդիրների լուծման կիրակատում: Լինելով յայնախոհ, հեռատես, միաժամանակ համարձակ ու եռանդուն, հանդուգնական ու անդիջում գործիչ՝ մեծ ներդրում ունեցավ հայոց նոր շրջանի պատմության ասպարեզում: Նա XIX դ. հայոց պատմության ամենամեծ դեմքերից է:

[19] Նույն տեղում, էջ 4557: